ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «22» 02 2023թ N 418-Ա

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 245-Ա ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի N 506-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46.1-ին և 46.2-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Էկոնոմիկայի նախարարությունում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատու անձ նշանակել Էկոնոմիկայի նախարարության իրավաբանական վարչության պետ (ծածկագիր՝ 23-33.1-Ղ3-1) Լիանա Գրիգորյանին:

2. Էկոնոմիկայի նախարարությունում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատու անձի փոխարինողներ նշանակել Էկոնոմիկայի նախարարության գործարար միջավայրի վարչության պետ (ծածկագիր՝ 23-32.21-Ղ3-1) Քրիստինե Գևորգյանին և գործարար միջավայրի վարչության գործարար միջավայրի բարելավման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 23-32.21-Մ2-1) Արմինե Անտոնյանին:

3. Անձնակազմի կառավարման վարչությանը՝ Էկոնոմիկայի նախարարության իրավաբանական վարչության պետի (ծածկագիր՝ 23-33.1-Ղ3-1), գործարար միջավայրի

վարչության պետի (ծածկագիր՝ 23-32.21-Ղ3-1), նույն վարչության գործարար միջավայրի բարելավման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 23-32.21-Մ2-1) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում սահմանված գործառույթները, իրավունքները և պարտականությունները համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-540-Ն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 24-ի «Հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատու պաշտոնատար անձ, ստորաբաժանում և հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձ նշանակելու մասին» N 245-Ա և Էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի հուլիսի 4-ի «ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 2-ի N 856-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող և պատասխանատու ստորաբաժանում նշանակելու» N 506-Ա հրամանները:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124